

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Հ. Մ. Ը. Մ.-Ի ՄԱՐՍԵԼԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻՆ՝
ՀԻՄՆԱԳՐՈՒԹՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ԱՌ

Հ. Մ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ՈՐ Ի ՄԱՐՍԵԼԻ, Ի ՖՐԱՆՍԱ

Սրտի անհուն ուրախութեամբ տեղեկացանք Երոպայի Կաթողիկոսական Պատուիրակի Մարսելյի շրջանի Փոխանորդ՝ Գերշ. Տ. Տարօն Եպիսկոպոս Շէրէն-եանէն, որ մօտ ատենէն արժանավայել համդիսաշուք տօնակատարութեամբ պիտի նշէք եւ պանծացնէք Մարսելյի Հ.Մ.Ը. Միութեան հիմնադրութեան 75-ամեակը:

Ի՞նչ գեղեցիկ եւ ներշնչողական երեւոյթ է անդրադառնալ որ 75 տարիներէ ի վեր Հ.Մ.Ը. Միութիւնը իր մարզական առաքելութիւնը հաւատարիմ հետեւողակա-նութեամբ յառաջ կը տանի հայ երիտասարդութեան կեանքին մէջ կենդանի պահելով «առողջ մարմնի մէջ՝ առողջ միտք եւ հոգի» նշանաբանը:

Բայց Հ.Մ.Ը. Միութիւնը աւելի է քան իր մարզական կոչումը: Ազգային առողջ ըմբռնումներու, հայրենասիրութեան, ազգամուէր ոգիի կազմատրման դպրոց մըն է ան, ուր այնքան հայ երիտասարդներ կը պատրաստուին որպէս ճշմարիտ հայեր՝ բարձր մարդկայնութեան սկզբունքներով տոգորուած:

Հ.Մ.Ը. Միութիւնը է նաեւ կարգ-կանոնի համայնական կեանքի վարժութեան դարբնոց մը, ուր իր անդամները կը սորվին կարգապահութեան բարիքները, կը քայնեն շարքերով եւ կշռոյթով, մարզական խաղեր յառաջ կը տանին ներդաշնակ գործակցութեամբ:

Մենք որքա՞ն պէտք ունինք այսպիսի անհղութիւններով եւ առաքինութիւն-ներով օժտուած սերունդի՝ որպէսզի մեր ազգային կեանքին մէջ տեղ գտնեն այդ սքանչելի սկզբունքները: Ասպետական հոգին է որ կը վերապրի Հ.Մ.Ը.Մ.-ի մէջէն մեր նոր սերունդին մէջ:

Յարգանք անցնող 75 տարիներու վաստակատրոներուն: Անոնք՝ որոնք երկնքի մէջ են այժմ, թող Աստուած օրինէ անոնց յիշատակը: Անոնք՝ որոնք այստեղ երկրի վրա կ'ապրին՝ թող հրճուին 75-ամեայ վաստակի բարիքներու վայելքովը:

Մեր Հայրապետական յորդորն է որ այսօրուան Մարսելյի Հ.Մ.Ը.Մ.-ի անդամ-ները նոր ուժ եւ կորով քաղեն 75-ամեայ փառաւոր ժառանգութենէն եւ նոր նուա-ճումներով հարստացնեն եւ տարածեն Հ.Մ.Ը.Մ.-ի ազգակերտական գործու-նելոթիւնը:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, եւ յաւիտ օրինեալ ի Մենք. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա՛ւ Օրհնութեան Գիրս

ի 4 Մարտի 1999

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարաւ Ե/157